ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

26 փետրվարի 2016 թվականի N 25-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 6-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով՝ «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերության 2016 թվականի փետրվարի 15-ի թիվ 01-13 գրությունը՝

Հրամայում եմ

1. «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերությանը տրամադրել ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերության ՀՀ Սյունիքի մարզի Տաշտունի ոսկի բազմամետաղային հանքային դաշտում՝ երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2013 թվականի հունիսի 14-ին տրամադրված ԵՀԹ-29/172 թույլտվությունը, լուծել՝ ընդերքօգտագործման թիվ Պ-172 պայմանագիրը:
3. *Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

- 2 օրվա ընթացքում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը տրամադրելու մասին,
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում համապատասխան գրառումների կատարումը:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ